ՔԱՂՎԱԾՔ
«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2023 թվականի փետրվարի 28-ի, ժամը 14:00-ի նիստի
N 5 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Դոցենտի գիտական կոչում հայցելու նպատակով գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը մասնակցելու համար **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսական հաշվառման ամբիոնի ավագ դասախոս, տնտեսագիտության թեկնածու Անուշ Աշոտի Գասպարյանի** ռեկտորին ուղղված դիմումի մասին հարցը:

Զեկուցող՝ գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ, հասարակագիտության ամբիոնի պրոֆեսոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, «ՀՊՏՀ ամբիոնի պատվավոր վարիչ» **Ա.Հ.Սարգսյան**:

Զեկուցողը նշեց. Ա.Ա.Գասպարյանը 2013 թվականի սեպտեմբերի 2-ից առ այսօր աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսական հաշվառման ամբիոնում. նախ՝ 02.09.2013 - 30.06.2014՝ ասիստենտ (համատեղությամբ), 01.09.2014 - 31.08.2021՝ ասիստենտ, իսկ 2021 թվականի սեպտեմբերի 1-ից՝ ավագ դասախոս: Վերջին 3 ուսումնական տարվա ընթացքում անընդմեջ իրականացրել է հայցվող գիտական կոչման մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն:

2011 թվականին Ա.Ա.Գասպարյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ՀՀ ԲՈՀ-ի (ներկայում՝ ՀՀ ԲՈԿ) կողմից նրան շնորհվել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: Նա հրատարակել է 11 գիտական աշխատանք: Թեկնածուական ատենախոսություն պաշտպանելուց հետո տվյալ բնագավառում ունի հրատարակված ինչպես գիտական, այնպես էլ ուսումնամեթոդական աշխատանք, որոնց ընդհանուր թիվը 8 է (1 խնդրագիրք (համահեղինակությամբ), 5 գիտական հոդված՝ տպագրված ՀՀ գիտական ամսագրերում, որից 3-ը՝ համահեղինակությամբ, 2 գիտական հոդված՝ տպագրված միջազգային գիտական ամսագրերում):

Ա.Ա.Գասպարյանը դասախոսությունները կարդում է տեսական ու գործնական բարձր մակարդակով՝ հաշվի առնելով տնտեսության ժամանակակից առանձնահատկությունները: Վայելում է պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների հարգանքը:

Ֆինանսական հաշվառման ամբիոնը և գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովը միաձայն երաշխավորել են Ա.Ա.Գասպարյանին մասնակցելու Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը դոցենտի գիտական կոչում հայցելու նպատակով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Պրոֆեսոր Դ.Ռ.Գալոյանը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գիտական խորհուրդը որոշեց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսական հաշվառման ամբիոնի ավագ դասախոս, տնտեսագիտության թեկնածու Անուշ Աշոտի Գասպարյանի թեկնածությունը դնել գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ դոցենտի գիտական կոչում հայցելու նպատակով (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. կողմ՝ 52, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Քվեարկության արդյունքներն են. գիտական խորհրդի 60 անդամից նիստին և քվեարկությանը մասնակցել են 52-ը: Փակ գաղտնի քվեարկության արդյունքներն են. կողմ՝ 52, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթիկ՝ 0:

ՈՐՈՇԵՑԻՆ.- **1.** Հաշվի առնելով, որ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսական հաշվառման ամբիոնի ավագ դասախոս, տնտեսագիտության թեկնածու Անուշ Աշոտի Գասպարյանի** կատարած գիտամանկավարժական աշխատանքը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հուլիսի 9-ի N 615 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի» (խմբ. 17.02.2022 թ. N 177 - Ն) 2-րդ գլխի 5-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներին՝ **Անուշ Աշոտի Գասպարյանին** շնորհել **դոցենտի** գիտական կոչում **«Տնտեսագիտություն»** բնագավառի **Ը.00.03՝ «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում»** մասնագիտությամբ:

2. Միջնորդել Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման կոմիտեին՝ հաստատելու համալսարանի գիտական խորհրդի որոշումը:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2023 թ. փետրվարի 28
Երևան